ԱՐՑԱԽԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ (heghmk@yahoo.com)

ՄՈՒՏՔ

Հայ Եկեղեցու պատմութեան ընթացքում կանանց մենաստանները մեծ տարածում չեն գտել: Սակաւ են նաեւ կուսանոցների մասին պատմագրական ու մատենագրական տեղեկութիւնները: Այդուհանդերձ, յայտնի են մի շարք հայ կուսանաց վանքեր, որոնք պատմական տարբեր ժամանակներում[1] գործել են ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Հայաստանի սահմաններից դուրս: Առաւել յայտնի են կուսանոցների վերազարթօնքի դարաշրջան համարուող ԺԷ. դարի կուսանոցները, որոնցից նշանաւոր են յատկապէս Սիւնեաց Աշխարհի գրչութեան կենտրոն կուսանոցները:

Այս յօդուածում կ'անդրադառնաք Արցախի կուսանաց անապատներին, որոնք գործել են պատմական Արցախի տարբեր գաւառներում:

Հարկ է նշել, որ դարերի ընթացքում փոփոխուել են Արցախի սահմաններն ու վարչական բաժանումները: Մեր ուսումնասիրութեան մէջ ներկայացուող կուսանոցներն ընդգրկում են Արցախի պատմական գաւառներն այն աշխարհագրութեամբ, ինչպիսին այն նկարագրել է Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցն իր յայտնի *Արցախ* աշխատութիւնում:

Բարխուդարեանցը հետեւեալ կերպ է գծագրում պատմական Արցախի սահմանները. «*Երասխ, Կուր, Խրամ եւ Ձորագետ (միացած) եւ Հակարի գետերի եւ Կայէնի, Դիլիջանի, Գեղամեան ամենաբարձր լեռների գագաթնագծի մէջ եղած տարածութիւն*»[2]: Նա առանձնացնում է 23 գաւառ[3],

---

[1] Մխիթարեան միաբան հայր Վարդան Հացունին առանձնացնում է Հայ Եկեղեցում կանանց վանքերի առաւել ծաղկուն երեք դարաշրջան՝ Դ. դարի երկրորդ կէսից մինչեւ Ե. դարը, ԺԲ. դարը, եւ՝ ԺԷ. դարը (Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 77):

[2] Մակար եպս. Բարխուտարեանց, *Արցախ*, տպ. «Արօր», Բագու, 1895, էջ 2: Ուշագրաւ են Ռուբէն Գալիչեանի հրապարակած Արցախի հին քարտէզները: Մասնաւորապէս՝ պատմական Արցախի նշուած տարածքն ընդգրկուած է Շիրակացու *Աշխարհացոյց*ի հիման վրայ Վենետիկում 1751ին հրապարակուած Հայաստանի քարտէզում: ԺԸ. դարից սկսած արեւմտեան, ինչպէս նաեւ մահմեդական քարտէզներում Ղարաբաղ անուամբ է նշուած Արաքսի (Երասխի) հիւսիսային հատուածում՝ Սեւանայ լճի հարաւ-արեւելեան աւազանից մինչեւ Կուր եւ Արաքս գետերի հատման տեղը (R. Galichian (Galchian), "Karabagh (Artsakh) in Old Maps," *Բանբեր հայագիտութեան*, 2:2017, էջ 57-64. նաեւ՝ 3:2017, էջ 34-38:

[3] Բարխուդարեանցը նշում է գաւառների պատմական անուանումները՝ ժամանակի կրած բոլոր փոփոխութիւններով, ինչպէս նաեւ դրանց՝ իր ժամանակի, հիմնականում թրքացած, անուանումները: Այդ գաւառներն են՝ **Ա.**- Պիանք (Ջաբրայէլի), **Բ.**- Մուխանք (Մուղան, Միլին դաշտ), **Գ.**- Արանոտ եւ **Դ.**- Տռի (յետագայում երկուսը միասին՝ Քեաբիրլու), **Ե.**- Ռոցպատեան եւ **Զ.**- Աղուէ (միաւոր-

որոնք տարածում են Արցախի Դաշտային (Ստո-րին), Լեռնային (Միջին) եւ Հարաւային (Վերին) աշխարհագրական հատ-ուածներում:

Մեր ձեռքի տակ չունենալով Արցախի պատմական գաւառների ամ-բողջական քարտէզը՝ օգտակար համարեցինք ներկայացնել Ալեքսան Յակոբեանի՝ ըստ *Աշխարհացոյց*ի կազմած Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգների քարտէզը, որտեղ անուանումների փոքր-ինչ տարբերու-թիւններով գծագրուած են Բարխուդարանցի նշած գաւառները:

ուած՝ Ջաւանշիր), **Է.**- Տուչքատակ (Տիգրանակերտ, Շահ-բուլաղ), **Ը.**- Ուտի-ա-ռանձնակ (Ջուանշիր), **Թ.**- Շիկաշէն (Գանձակ, Գեանջա, Ելիսաւետպոլ), **Ժ.**- Կողթ (Շամքոր, Ձակամ), **ԺԱ.**- Պազկանք (Դիզակ, Ջաբրայէլ), **ԺԲ.**- Միւս Հա-բանդ (Հաբանդ-Ամարաս, Վարանդա), **ԺԳ.**- Մեծիրանք (Մեծարանք, Խաչէն), **ԺԴ.**- Ըստիսական (Ըռստակ, Հաթերք), **ԺԵ.**- Մեծ-կողմանք (Մեծկուանք, Չարա-բերդ, Թալիշ, Կիլստան, Ջրաբերդ, Ջուանշիր), **ԺԶ.**- Գարդման (Գարդմանաց ձոր, Գարթմանիկ, Գանձակ), **ԺԷ.**- Փառնէս (Փառիս, Փառիսոս, Շամշատին), **ԺԸ.**- Քուստի (Քաւս, Ղազախ), **ԺԹ.**- Ձաւէ (Ձորագետ, Երկիր Սեւորդեաց, Երկիր Կայէնոյ, Ղազախ), **Ի.**- Բերդաձոր (Բերդ-ձոր, Բելուական, Ղալաղշլաղ, Ջաբրայէ-լի), **ԻԱ.**- Հարճլանք (Ձառիստ, Հաճիլար), **ԻԲ.**- Վակունիք (Վերին Վայկունիք), **ԻԳ.**- Սիսական Ոստան (Ծար, Ձար): **Բ.-Ժ.** գաւառներն երբեմն պատկանելիս են եղել Ուտի նահանգին (Բարխուդարեանց, էջ 21-26):

Արցախի կուսանոցների մասին կարեւոր աղբիւրներ են ինչպէս ձեռագիր յիշատակարաններն ու վիմագիր արձանագրութիւնները, այնպէս էլ՝ տեղագրական ու ճամփորդական յուշագրութիւնները, ժողովրդական տարբեր աւանդազրոյցները:

Ուշագրաւ են Սարգիս արք. Ջալալեանցի ու ազգագրագէտ Երուանդ Լալայեանի ԺԹ. դարի յուշագրութիւնները: Առաւել ուշագրաւ են Բարխուդարեանցի հաղորդումներն Արցախի պատմական գաւառների մասին, որում առաջին անգամ համապարփակ ներկայացուած են բազմաթիւ պատմական յուշարձաններ ու սրբավայրեր: Նոր ժամանակների երախտաւորներից են Շահէն Մկրտչեանն ու Սամուէլ Կարապետեանը:

Ժամանակագրական առումով Արցախի կուսանոցները թուագրւում են հիմնականում ԺԷ. դարով: Սակայն յայտնի են նաեւ այլ դարաշրջանների կուսանոցներ:

Ստորեւ՝ Արցախի նշուած սահմաններում գործած կուսանոցները:

Աւետարանոցի Կուսանաց Անապատ

Արցախի կուսանաց անապատներից առաւել յայտնին Աւետարանոցի[4] ԺԷ. դարի Կուսանաց Անապատն է պատմական Վարանդա[5] գաւառում:

Կուսանոցը հիմնադրուել է 1616ին, որի մասին վկայում է մուտքի բարաւորին արուած արձանագրութիւնը. «Եկեղեցիս թվ. ՌԿԵ»[6]:

---

[4] Ըստ աւանդազրոյցների՝ Աւետարանոցը հիմնել է Վաչագան Գ. բարեպաշտ թագաւորը: Աւանդութիւնը Կուսանաց Անպատի հիմնադրութիւնը եւս այս արքային է վերագրում, իսկ կուսանոցի առաջին միանձնուհի համարում Վաչագան թագաւորի դստերը (Սարգիս արք. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ.*, տպ. Ներսիսեան հոգեւոր դպրոցի, Տփխիս, 1858, էջ 248. նաեւ՝ Երուանդ Լալայեան, «Վանադայ», *Ազգագրական հանդէս, գիրք Բ.,* 1897, Թիֆլիս, էջ 42. նաեւ՝ Е. Мелик-Шахназаров, "Древности селения Чанахчи," *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, выпуск 19-й («Չանախչի բնակավայրի հնութիւները», նիւթերի ժողովածու Կովկասի տեղանքի եւ ազգութիւնների մասին, 19րդ պրակ, հրատ. Կովկասի ուսումնական շրջանի վարչութեան), Թիֆլիս, 1894, էջ 81:

[5] ԺԲ. գաւառն է Լեռնային կամ Միջին Արցախում, որ կոչուել է նաեւ Միւս Հաբանդ կամ Հաբանդ-Ամարաս: Գտնւում է Գարգար (Կարկառ) գետի վերին հոսանքի շրջանում (Բարխուտարեանց, էջ 23. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 4*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1986, էջ 772):

[6] Բարխուտարեանց, էջ 96. նաեւ՝ *Ազգագրական հանդէս*, էջ 42: Բարխուդարեանցը ներկայացնում է նաեւ այլ արձանագրութիւններ, որոնց մեծ մասը 1960ականներին Խորհրդային Հայաստանից Ադրբեջան գործուղուած հայ գիտարշաւի մասնակիցները տեղում չեն գտել (*Դիւան հայ վիմագրութեան. Արցախ, պրակ V*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 150-51):

Ինչպէս արդէն նշել ենք, ԺԷ. դարը Հայ Եկեղեցում կուսանոցների վերարթնացման շրջան էր, նշանաւոր՝ Սիւնիքի կուսանաց անապատներով ու իր գրչուհիներով: Լինելով նոյն դարաշրջանի ծնունդ՝ Աւետարանոցի կուսանոցը եւս, ինչպէս Սիւնիքի Շէնհէրի կուսանոցը, գրչութեան կենտրոն էր:

ԺԹ. դարի կէսերին Ջալալեանցն Աւետարանոցում տեսել է կուսանոցի մայրապետերից Գայիանէ[7] գրչուհու 1671ին ընդօրինակած Աւետարանը[8], որի յիշատակարանը մեզ է փոխանցում կուսանաց անապատի հիմնադրի ու առաջին մայրապետի, ինչպէս նաեւ այլ երախտաւորների անուններ.

> Արդ այսմ Աստուածեղէն եւ երկնապարգեւ գանձիս, եւ լուսափայլ մարգարտիս եղեւ ցանկացօղ եւ եռափափագ սիրով գծագրօղ եւ ստացօղ աստուածասէրք եւ բարեպաշտուհիք սրբասնունդք եւ կուսակրօնք հարազատքն գծօղ սուրբ Աւետարանիս մայրապետն **Գայիանէ** եւ անդրանիկն իւր **Հռիփսիմէ**, որ եղեւ սկիզբն շինութեան սուրբ կուսաստանին Ղարաբաղու, որ ի գիւղաքաղաքն Աւետարանոցին ընդ հովանեաւ սուրբ Նշանին եւ այլում սրբութեանց՝ որ են աստ: Արդ ես նուաստս բնաւից եւ անարհեստս արուեստաւորաց բազմամեղ **Գայիանէս** ջերմեռանդ սիրով ծրեցի զսուրբ Աւետարանս թվին Հայոց ռճի յիշատակ հոգւոյ ծնողին իմոյ եւ մարմնաւոր հարազատին **Հռիփսիմէին** եւ հոգեւոր հօրն իմոյ բազմաշխատ տէր Առաքելին, որ քրտնաջան երկամբք աշխատեալ է ի վերայ Անապատիս ի մանկութենէ մինչեւ ի ծերութիւն եւ

---

[7] Գայիանէի անձի հետ կապուած կայ մի թիւրըմբռնում, որ շրջանառւում է նաեւ մեր օրերում: Ժողովրդական աւանդութեամբ Րաֆֆին նրան համարում է մելիք Հուսէյնի եւ նրա կողակից Աննա Խաթունի դուստրը, որն 1733ին աչքի է ընկել իր հերոսութեամբ՝ օսմանցի զօրախմբի դէմ պայքարում: Ինչպէս գրում է Րաֆֆին՝ սպանելով օսմանցի զօրապետին, Գայիանէն «*իր անձը նուիրեց կուսակրոնութեան եւ մտաւ Աւետարանոց գիւղի կուսանաց անապատը*»: Այս նոյն Գայիանէին էլ Րաֆֆին նոյնացնում է մեր յօդուածում նշուած 1671ի Աւետարանի Գայիանէ գրչուհու հետ: Այստեղ ժամանակագրական սխալ կայ այն պարզ պատճառով, որ Գայիանէ գրչուհու ձեռագրերը գրուել են աւելի վաղ՝ ԺԷ. դարում (Րաֆֆի, էջ 48. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտր. Ա.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1942, էջ 445. նաեւ՝ *Դիւան. Արցախ*, էջ 147-48. նաեւ՝ Թամարա Մինասեան, *Արցախի գրչութեան կենտրոնները,* Նայիրի հրատ., Երեւան, 2015, էջ 48):

[8] 1881ին Աւետարանոցում այս նոյն Աւետարանը տեսել է նաեւ Րաֆֆին: Աւելի ուշ Աւետարանոց այցելած Լալայեանն Աւետարանն այլեւս չի գտել: Այսօր էլ Աւետարանի ճակատագիրն անյայտ է (Րաֆֆի, *Խամսայի Մելիքութիւնները*, տպ. Կովկասի Կառավարչ. Գլխ. Կառավ., Թիֆլիս, 1882, էջ 48. նաեւ՝ *Ազգագրական հանդէս*, էջ 42):

բազմերախտ Մարտիրոս Արհի եպիսկոպոսին եւ ծնողացն իմոց եւ այլ համայն ազգականաց իմոց՝ ամէն[9]:

Գայիանէ գրչուհուն է պատկանում նաեւ Ձեռաց Մաշտոցի[10] մի ընդօրինակում, որ պահւում է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

Կուսանոցի գրչուհիներից է նաեւ Կատարինէ կոյսը, որի 1650ին ընդօրինակած Աւետարանը ծաղկել է նոյն Գայիանէ գրչուհին:

Ուշագրաւ են ձեռագրի յիշատակարանում Կատարինէ գրչուհու գրառումները: Նա խնդրում է յիշել *«զմայրագութ եւ սննդամայրն վարպետն իմ՝ զՄարիամ կուսանուհի, զոր սնոյց զիս եւ կարդացոյց բազում աշխատութեամբ եւ յետ իւրոյ աշխատութեանն ետ զիս ի ձեռն տէր Աստուածատուր քահանային վասն շարականի եւ գիր ուսուցանելոյ, որ էր խոստովանահայր անապատին Շէնհերու»*[11]:

Դատելով այս յիշատակարանից՝ Կատարինէ կոյսը, որ իրեն «ղարիպ» է կոչում, գրչութեան արուեստ է սովորել Շէնհէրի կուսանոցում, որտեղից էլ տեղափոխուել է Աւետարանոց. փաստ՝ որ վկայում է այս երկու կուսանոցների առնչութիւնների մասին:

Բարխուդարեանցի բերած մեկ այլ ձեռագիր յիշատակարանից կարելի է եզրակացնել նաեւ, որ կուսանոցի միանձնուհիներ են եղել նաեւ Վարանդայի մելիքների դուստրերից: Թերեւս, նրանցից են, մելիք Բաղու կուսակրօն դուստրերը, որոնց անունները նշւում են Աւետարանոցի եկեղեցում պահուող Աւետարանի՝ 1737ին գրուած մի յիշատակարանում. «*Սուրբ աւետարան սրբագիր եւ ոսկեզօծ վախմ եւ յիշատակ է Աբրահամ պարոն-Տէրին, որ տվան Մէլիք Պաղուն կուսակրօն դստերացն Հռուբսիմին եւ Դալաթին եւ Շահանդուխտին ձեռքն ի վայելումն.... գրեցաւ մատամբ տէր Եղիազարին մայիսի ԻԵ. օրն թվ. ՌՃՁՋ. էր...*»[12]:

Թէ ե՞րբ է Աւետարանոցի Կուսանաց Անապատը դադարել գործելուց՝ յայտնի չէ: Կարելի է միայն ենթադրել, որ դա տեղի է ունեցել մինչ ԺԹ. դարը՝ ԺԸ. դարի վերջերին՝ 1797ին Իրանի շահ աղա Մուհամադ խանի Անդրկովկաս արշաւանքների ժամանակ[13], երբ Վարանդայից Վրաստան է

---

[9] Ջալալեանց, էջ 246-47. նաեւ՝ Հեղինէ Մկրտչեան, «Հայկական ձեռագրերի յիշատակարանները կանանց մենաստանների եւ կուսակրօն կանանց վերաբերեալ», *Էջմիածին*, Բ:2013, էջ 99:

[10] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ը.*, «Նայիրի» հրատ., Երեւան, 2013, էջ 17-24. նաեւ՝ Մինասեան, էջ 48-49:

[11] *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1641-1660), հտր. 3*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 627. նաեւ՝ Մկրտչեան, էջ 98:

[12] Բարխուտարեանց, էջ 95:

[13] Այս առիթով յիշատակելի է կուսանոցին վերաբերող մի աւանդազրոյց, ըստ որի 1797ին, շահի արշաւանքի ժամանակ կոյսերը, փախչելով պարսիկ զինուորներից, թաքստոց են գտնում անտառում: Կոյսերից մէկը, սակայն, յապաղելով զին-

փախել Մելիք-Շահնազարեանների տոհմից մելիք Ջումշուդը: Նոյն շրջանում Արցախում սկսուած սովի ու ժանտախտի պատճառով Վրաստան է գաղթել նաեւ Վարանդայի բնակչութիւնը[14]:

Այսպէս թէ այնպէս՝ Ղարաբաղի *կոնսիստորիայի*[15] կազմած 1825ի վան-քերի ցանկում Աւետարանոցի կուսանոցն այլեւս անշէն է. «*Անշէն անա-պատ Կուսանաց, կառուցեալ մերձ գեղջն Աւետարանոց Վարանդայ գա-ւառակի, եկեղեցին ամբողջ, տանիք գաւթին խախտեալ, յորում ամփոփ-եալ կան մարմինք ոմանց Մելիքաց ցեղին Մելիք-Շահնազարեանց, եւ այ-լոց հոգեւորականաց, սենեակքն բոլորովին կործանեալք*»[16]:

Աւետարանոցի արդէն ամայացած կուսանոցի մասին է հաղորդում նաեւ Ջալալեանցը ԺԹ. դարի կէսերին. «*Մենաստան Կուսանաց անկանի ի հարաւային կողմն այսր գեղջ կառուցեալ ի ծայր ապառաժ վիմի սագաշէն եւ փոքրիկ, շուրջ զորով են հարիւրաւոր սենեակք միաբան Կուսանաց արդէն ամայի*»[17]:

Երբեմնի նշանաւոր կուսանոցը ԺԹ. դարի վերջին նկարագրում է նաեւ Բարխուդարեանցը, երբ արդէն աւերուած էր միաբանուհիների կացարանների մեծ մասը, անապատի պարսպի պատերը տեղ-տեղ վնասուած:

> Անապատս շինուած է անտաշ քարով երկու կամարի վերայ, որի երկարութիւնն է 11 մետր եւ լայնութիւնն 9, (խիստ անմաքուր է):
> Անապատս ունի եւ գաւիթ, որ շինուած է նոյն ոճով, երկարութիւնն 5 մետր 75 սանթիմ, լայնութիւն 8 մետր 90 սանթիմ (հարաւից հիւսիս): Ինչպէս անապատս եղած է յատուկ կուսանոց, նոյնպէս գաւիթս եղած է յատկապէս դամբարան Մէլիք Շահնազարեանի իշխանական ցեղին: Գաւթումս ամփոփուած են Մանուէլ վարդապետի, Մէլիք-Միրզայի, Մէլիք-Յիւսէյինի, Մէլիք-Յովսէփի եւ սոցա տիկնանց մարմիններն[18]:

ուորի սրից, կարողանում է միայն խոյս տալ՝ ժայռից իրեն ցած նետելով: Ըստ աւանդազրոյցի՝ աներեւոյթ ուժի զօրութեամբ նա անվնաս հասնում է ցած: Արշաւանքի ժամանակ կուսանոցում պահուող կենաց փայտի մասունքով արծաթապատ խաչը գերի է տարուում, որը աղաւնի դարձած վերադառնում է վանք ու կրկին խաչի ձեւ ստանում: (Լալայեան, էջ 43):

[14] Այս դէպքերի մասին տե՛ս՝ Արտակ Մաղալեան, *Վարանդայի Մելիքութիւնը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն. անցեալը, ներկան եւ ապագան (միջազգային գիտաժողովի նիւթեր)*, Երեւանի համալսարան հրատ., Երեւան, 2007, էջ 141-42:

[15] Վարչադատական գործերով թեմական-եկեղեցական մարմին Ռուսաստանում:

[16] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք Թ.*, «Ոսկան Երեւանցի» հրատ., Երեւան, 2001, էջ 47:

[17] Ջալալեանց, էջ 246-47:

[18] Բարխուտարեանց, էջ 95-96:

Շուշիի Սուրբ Աստուածածնայ Կուսանաց Անապատ

Երկու դար անց՝ 1816ին, երբ արդէն լքուած ու կիսաւեր էր Աւետարանոցի անապատը, մի նոր կուսանոց է հիմնուել **Շուշիում**՝ կոյս Հռիփսիմէ Բահաթուրեանցի եւ իր եղբայրների նախաձեռնութեամբ:

1856ին Էջմիածնի սինոդին ուղղած նամակում, կուսանոցի մայրապետ Հռիփսիմէն ներկայացնում է կուսանոցի հիմնադրման պատմութիւնը.

> Ի ժամանակ խանական կառավարութեան երկրին Ղարաբաղու՝ յորժամ ես՝ գոլով մէն ի մանկական հասակի՝ ցանկայի հրաժարիլ ի զբաղմանց աշխարհի, ջանայի թողուլ զազգատոհման եւ մեկնիլ ի նոցանէ, գնալ յանապատ իմն հեռի եւ լցուցանել զփափագ սրտիս ի կուսակրօնութեան: Հարազատ եղբարքն իմ հանգուցեալ Իսրայէլ եւ Աստուածատուր եւ այժմ կենդանի Պետրոսն Բահադուրեանց չտալով թոյլ կամաց իմոյ աշխատեալ են շինել աստ վասն իմ զտեղի միայնակեցութեան[19]:

Ներկայում հիմնովին աւերուած կուսանոցի եկեղեցին Շուշիի առաջին քարաշէն եկեղեցին էր, որի դռան ճակատակալ քարին նոյնպէս Հռիփսիմէի եւ իր եղբայրների անուններն էին. «*Շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Աստուածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց Կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ եւ Պետրոսի Գրիգորեանք Բահադուրեանց ի թվն 1816 ամի*»[20]:

Բարխուդարեանցն յաւելում է. «*Միեւնոյն բազմաշխատ Կոյս Հռիփսիմէն շինել տուած է զանգատունը առանց օժանդակութեան այլոց*»[21]:

Կուսանոցի այս եկեղեցում էլ, ինչպէս նշում է Հռիփսիմէ Բահաթուրեանցը, «*ի քսանամեայ հասակի ձեռնադրեալ ի նախկին տեղական Սարգիս մետրապօլիտէն Աղուանից մնացել եմ ի միայնակեցութիւն ի նոյն սբ. վանս*»[22]:

Շուշիի Կուսանաց Անապատը Արցախի միակ կուսանոցն է, որի մասին պահպանուած արխիւային նիւթերը բաւականաչափ տեղեկութիւններ են հաղորդում կուսանոցի գործունէութեան մասին: Այն գործել է աւելի քան 100 տարի: Կոյսերի առաւելագոյն թիւը չի գերազանցել մէկ տասնեակը: Ուշագրաւ է, որ նրանց մեծ մասը, ինչպէս Հռիփսիմէ մայրապետը, եղել են ձեռնադրուած սարկաւագուհիներ՝ մի երեւոյթ, որ բնորոշ է այս շրջանի Հայ Եկեղեցու կուսանոցներին, ինչպէս Թիֆլիսի Ս. Ստեփանոս եւ Նոր Ջուղայի Ս. Կատարինէ վանքերին:

---

[19] ՀՀ Ազգայն Արխիւ (ԱԱ), ֆ. 56, g.1, գ. 3453: Հմմտ.՝ Հեղինէ Մկրտչեան, «Շուշիի Կուսանաց Անապատը» («Շուշին՝ հայկական մշակոյթի օջախ» գիտական կոնֆերանսի զեկոյց) *«Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք*, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., Շուշի, 2014, էջ 205:

[20] Բարխուտարեանց, էջ 148:

[21] Նոյն:

[22] ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 3453:

Կուսանոցի 100ամեայ պատմութիւնն իր ողբերգական վախճանին է հասել 1920ին՝ Շուշիի հայկական թաղամասում մուսաւաթականների սանձազերծած մարտեան կոտորածներից[23]:

Արդէն կիսաւեր Կուսանաց Անապատն ադրբեջանցիներն հիմնայատակ աւերել են 1960-70ականներին[24]: Կուսանոցի միակ վկաները Շուշիի հայկական հին գերեզմանոցում պահպանուած միքանի կոյսերի տապանաքարերն են, որոնց առիթ ենք ունեցել այցելելու 2012ին:

Դրամատիկ է նաեւ կուսանոցի վերջին սարկաւագուհու՝ կոյս Նունէ Սարգսեանի ճակատագիրը: «*Արտաքին չարութեան, ներքին ամբարտաւ[ան]ութեան հետեւանքով Հայաստանի շատ գաւառների հետ միասին կործանուեց եւ գեղեցիկ Շուշին եւ նրա մէջը մեր մենաստան-անապատը*»[25]՝ 1925ին Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսին յղած նամակում գրել է լքուած անապատի սարկաւագուհին կաթողիկոսից նպաստ կամ կացարան խնդրելով:

Յետագայում Նունէ կոյսին տեսնում ենք արդէն Բաքուի հայկական եկեղեցում: 1956ի *Էջմիածին* ամսագրից տեղեկանում ենք. «*Բաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում երկար տարիներից իվեր ապրում եւ ծառայում է Սարգսեան կոյս Նունէն: Վերջերս նա լանջախաչով պարգեւատրուեց Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Ս. Օծութեան բարեհաճ կարգադրութեամբ կոյս Նունէն թոշակ է ստանում Մայր Աթոռից*»[26]:

---

[23] Ըստ ադրբեջանական աղբիւրների՝ 1920 Մարտի 22ին Շուշիում սպանուել է շուրջ 8000 հայ (*Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов [Լեռնային Ղարաբաղը 1918-1923ին, յօդուածների եւ նիւթերի ժողովածու]*, ՀԱԱ ԳԱ հրատ., Երեւան, 1992, էջ 416. նաեւ՝ Բակուր Կարապետեան, *Շուշի բերդաքաղաքը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2000, էջ 278-82. նաեւ՝ Համլէտ Յարութիւնեան, «Շուշիի հայութեան կոտորածները (1919թ. Յունիս եւ 1920թ. Մարտ)», *Բանբեր հայագիտութեան*, 1:2015, էջ 58-63. նաեւ՝ Ալիկ Ղարիբեան, «Շուշիի 1920թ. կոտորածը», *Շուշին հայոց քաղաքակրթութեան օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նուիրուած գիտաժողովի նիւթեր)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 175-80:

[24] Շահէն Մկրտչեան, Շչորս Դաւթեան, *Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաքը*, Գասպրինտ, Երեւան, 2008, էջ 112:

[25] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան. 1921-1938թթ.*, կազմող Ս. Բեհբուդեան, ՀՀ կառավարութեանն առընթեր արխիւային գործի վարչութիւն, ԵՀ տպարան, Երեւան, 1994, էջ 70:

[26] Ն. Տէր Կարապետեան, *Ադրբեջանի թեմն այսօր, Էջմիածին*, Դեկտեմբեր, 1956, էջ 101:

Մեծ Ղարամուրատի Սուրբ Աստուածածին Կուսանաց Անապատ

Կուսանոցների վերարթնացման ԺԷ. դարի կանանց վանքերից է նաեւ պատմական **Փառիսոս**[27] գաւառի **Մեծ Ղարամուրատ**[28] բնակավայրի **Սուրբ Աստուածածին** կուսանաց անապատը:

Կուսանոցը հիմնադրուել է 1636ին, Փիլիպպոս կաթողիկոսի օրհնութեամբ ու անմիջական մասնակցութեամբ: Այդ մասին տեղեկանում ենք Նոր Ջուղայում ընդօրինակուած Յայսմաւուրքի յիշատակարանից: Գրչագիր այս մատեանն էլ Փիլիպպոս կաթողիկոսի ընծան է կուսանաց անապատին:

> Յիշատակ է Յայսմաւուրքս ի դուռն **Ղարամուրատու** կուսանաց **Սուրբ Աստուածածնին**, զի ի յամի, որում թվականն էր Հայոց ՌՁԵ, սրբազան եւ երիցս երանեալ հայրապետն՝ տէր **Փիլիպպոսն** ետուր զսա ի դուռն Սուրբ ուխտ]իս եւ հաստատեաց զսա [եր]դմամբ գո նզովիք, թէ որչ[ա]փ այս անապատ հաստատ, ով ոք հակառակութիւն անի եւ հեռացուցանէ՝ նզովեալ լիցի ի սուրբ հայրապետաց, զի ինքն հայրն մեր՝ վերոյգրեալ սուրբ հայրապետս խնամարկեալ հիմն արկեաց եւ հաստատեաց զանապատս աղջկանց եւ նախախնամեաց սպասուք եւ ամենայն զարդուք, եւ կացոյց մայրպետ՝ զ**Հռիփսիմէ** կոյսն, եւ պարկեշտ վ[ա]րուք, եւ միաբանքն եւս նոյնպէս[29]:

Կուսանոցի առաջին մայրապետ Հռիփսիմէի անունը նշուած է նաեւ ԺԶ. դարի Շարակնոցի յիշատակարանում: Այս ձեռագիրը եւս 1636ին ընծայուել է կուսանոցին. «*Յիշատակ է Շարակնոցս Ղարամուրատի աղջկանց անապատին, ի թվին ՌՁԵ, յառաջնորդութեան Հռիփսիմէ եւ իւր սրբակրօն միաբանիցն*»[30]:

---

[27] ԺԷ. գաւառը գտնւում է Լեռնային Արցախի հատուածում: Տարածւում է Կուրի աջակողմեան Շամխոր վտակի, Գեղամայ լեռնաշղթայի շարունակութեան եւ Տաւուշ գետակի միջեւ (Բարխուտարեանց, էջ 24. նաեւ՝ Յակոբեան, Բախշեան, Բարսեղեան, *հտր. 5*, ԵՀ հրատ., Երեւան, 2001, էջ 239):

[28] Գտնւում է Ադրբեջանի Գետաբեկի շրջանում: Հայաթափուել է ԺԸ. դարի վերջերին: Ներկայում անմարդաբնակ տարածք է (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, ԵՀ հրատ., Երեւան, 1991, էջ 536. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2004, էջ 88-89):

[29] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հտր. Բ.*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 656: Հայերէն ձեռագրերի մայր ցուցակում հրապարակուած այս նոյն յիշատակարանում նշուած է ՌՁԷ. տարեթիւը՝ 1638: Ըստ նոյն ձեռագրի՝ մէկ այլ յիշատակարանի՝ Յայսմաւուրքի պատուիրատու եւ ստացող Էրտամը 1638ին ձեռագիրը նուիրել է Փիլիպպոս կաթողիկոսին, որն էլ, ըստ մեզ արդէն ծանօթ յիշատակարանի, այն նուիրել է Ղարամուրատի Կուսանաց Անապատին նոյն՝ 1638ին: Հակուած ենք կարծելու, որ իրական է ՌՁԵ տարեթիւը (*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ե.*, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 39):

[30] *Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հտր. Բ.*, էջ 669:

Կուսանոցն հաւանաբար հարուստ է եղել ձեռագիր մատեաններով, որոնք մենաստանի փակուելուց յետոյ յայտնուել են այլ վայրերում: Այսպէս, Բարխուդարեանցը ԺԹ. դարի վերջերին Գարդման գաւառի Մեծ Բանանց գիւղի եկեղեցում տեսել է 1671ի գրչագիր Աւետարան, որը եւս ժամանակին նուիրաբերուել է Ղարամուրատի Կուսանաց Անապատին:

Շնորհօք եւ օժանդակութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւարտեցաւ նոր կտակարանս.. ձեռամբ.. Մխիթարի ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի, հարիւրերորդի, քսաներորդի... ի յայս ամի սաստիկ մահ յերկիրս Վերին Զակամայ, որ օր մի 'ի տան միում եօթն հոգի վախճանեցաւ... ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան նահանգիս Մինաս վարդապետի եւ ի տէրութեան Պարսից Շահ Սուլէիմանին ի յերկիրս Վերին Զակամայ 'ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի խնդրոյ բարեմիտ Եւային եւ այրն (առն) իւրոյ Ոսկանին...: Արդ ես Եւայս ստացայ զայս աւետարանս եւ ետու վախմ ի դուռն Ղարամուրատ Կուսանաց անապատի Սուրբ Աստուածածնի[31]:

Ղարամուրատի կուսանոցը գործել է առնուազն մինչեւ 1701. դրա վկայութիւնն է եկեղեցու դռան վրայի արձանագրութիւնը.

Շնորհիւ Աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս (անապատ կուսանաց) արդեամբ գուիք (գոյիւք) ամենայն քրիստոնէից՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամենայն աշխատողաց 'ի մայրապետութեան անապատիս Թագուհւոյն եւ Կայինային 'ի ՌՃԾ. թվ.[32]:

Ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքներում է փակուել կուսանոցը՝ յայտնի չէ: Կարելի է ենթադրել միայն, որ այն դադարել է գործել մինչ Մեծ Ղարամուրատի հայաթափումը, որ տեղի է ունեցել 1770ականներին: Նման ենթադրութեան առիթ է տալիս այն, որ կուսանոցում պահուող ձեռագրերը ԺԸ. դարի երկրորդ տասնամեակի վերջերին այլեւս այլոց ձեռքին էին:

Այսպէս, Փիլիպպոս կաթողիկոսի նուիրաբերած Յայսմաւուրքի վերջին ստացողը «*ասպուածայսէր, ողորմած եւ բարէբաշդ՝ Վարդանն*»[33] է, որ 1733ին նորոգել է այն: Կուսանոցի վերոյիշեալ Աւետարանը եւս 1729ին այլ անձի ձեռքում էր. «*Զվերջին ստացող զսուրբ աւետարանս... Մէլիք Սարգիս եւ ծնողացն հայրն իմոյ Ովանէսն... թվին ՌՃՀԸ*»:

---

[31] Բարխուտարեանց, էջ 282. նաեւ՝ Մինասեան, էջ 69:

[32] Բարխուտարեանց, էջ 309. նաեւ՝ Ե. Լալայեան, «Գանձակի գաւառ», *Ազգագրական հանդէս, գիրք Ե.*, 1899, Թիֆլիս, էջ 326-27: Արձանագրութիւնը 1960ականներին արդէն ոչնչացուած էր (*Դիւան հայ վիմագրութեան. Արցախ*, էջ 273):

[33] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Ե.*, էջ 40:

Տող կամ Դող աւանի Կուսանաց Անապատ

Պատմական **Դիզակ**[34] գաւառի **Տող** կամ **Դող** աւանի կուսանոցի հիմնադրման ժամանակի մասին աղբիւրները լուռ են: Նշենք, սակայն, որ կուսանոցի մասին մեզ հասած տեղեկութիւններում յիշատակւում են Դիզակի մելիքների անուններ, որից հաւանական է դառնում, որ այս կուսանոցը եւս ԺԷ. դարի է:

«*Յաջ կողմն այսր գեղջ է սագաշէն եկեղեցի եւ անապատ կուսանաց, շուրջ զորով գտանին գերեզմանք պատուելի արանց*»[35]՝ այսպէս է նկարագրում Ջալալեանցը Տողի կուսանոցը:

Կուսանոցի մասին պահպանուել է նաեւ աւանդազրոյց, ըստ որի իշխանազուն մի այր հարկադրաբար կրօնափոխ է եղել՝ ընդունելով մահմետականութիւն: Ապա զղջալով ապաշխարել է եւ «*ի նշան ճշմարիտ ջերմեռանդութեան կառոյց զեկեղեցին սուրբ Ստեփանոսի եւ զանապատն Կուսանաց*»[36]:

Բարխուդարեանցն առաւել մանրամասն է ներկայացնում անապատը.

> Հանգստարանիս վերեւի ծայրում կայ մի այլ քարուկիր եկեղեցի եւս, կառուցեալ մի կամարի վերայ, որի ճակատի խաչի վերայ փորագրուած է. «Խաչս Վարդան»: Եկեղեցուս մէջ է Մէլիք-Բախտամի գերեզմանն, որ ծածկուած է հողով: Եկեղեցուս մօտ նշմարուում են խուցերի եւ կացարանների բակեր եւ բեկորներ, որոց մասին պատմում են թէ կուսանոց եղած է անապատս[37]:

Ժողովրդական զրոյցների իսկութիւնը հաստատում է գիւղի Ս. Յովհաննէս եկեղեցում պահուող խաչաձեւ արծաթեայ մասնատուփի վրայի արձանագրութիւնը. «*Յիշատակ է Մէլիք Եսայի (ու) որդի Սափարի բէկին, որ եր Դողա կուսանաց Անապատին. սա է Յակովբ հայրապետին եւ Թէոդորոսի մասունք…*»[38]:

Ոսկանապատի Սուրբ Աստուածածին Կուսանաց Անապատ

Արցախում ԺԷ. դարի եւս մէկ կուսանոց է **Գարդման**[39] գաւառի **Ոսկանապատ**[40] բնակավայրի **Սուրբ Աստուածածին** կուսանաց անապատը,

---

[34] ԺԱ. գաւառն է Հադրութի եւ Դիզափայտի լեռնաշղթայի միջեւ: Յիշատակւում է նաեւ Պազկանք անուամբ (Բարխուտարեանց, էջ 23. նաեւ՝ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 2*, ԵՀ հրատ., Երեւան, 1988, էջ 107):

[35] Ջալալեանց, էջ 259:

[36] Նոյն:

[37] Բարխուտարեանց, էջ 77:

[38] Նոյն, էջ 74:

[39] ԺԶ. գաւառն է, որ յետագայում ստացել է Գանձակ անուանումը: Ընկած էր Կուրակ եւ Շամքոր գետակների, դաշտաբերանի եւ Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ (Բարխուտարեանց, էջ 24):

ըստ աւանդութեան՝ հիմնուած ոմն մելիք Ոսկանի[41] կողմից, որից եւ Ոսկանապատ անունը:

Բարխուդարեանցի նկարագրութեամբ՝ եկեղեցին գիւղի վերին ծայրում էր, Ոսկանապատ գետի ձախ ափին: Եկեղեցու հարաւային պատի մօտ Յարութիւն պապի 1821ի տապանաքարն էր. «*Այս է տապան Յարութիւն պապին, որ վերսփին նորոգեաց սուրբ եկեղեցիս թվ. ՌՄՀ.*»[42]:

Բարխուդարեանցը **Սուրբ Աստուածածինը** աւելի նմանեցնում է եկեղեցու, քան՝ վանքի.

> Ունի եկեղեցու ձեւ եւ ոչ վանքի, սակայն ունեցած է միաբանից խուցեր տաճարս իւր արեւմտեան կողմում, որպէս վկայում են տեսողք. բայց յորդ անձրեւի հեղեղներն քանդած եւ տարած են սոյն սենեակները եւ կոյտ կոյտ խիճեր դիզած խուցերի տեղերում[43]:

Սուրբ Աստուածածնի կուսանոց լինելու հանգամանքը կրկին հաստատում են ձեռագիր յիշատակարանները: 1679ին ընդօրինակուած Աւետարանը[44] ԺԹ. դարի վերջին պահուել է Ղազախի Սեւքար գիւղի եկեղեցում, որտեղ եւ ձեռագրի երկու յիշատակարան օրինակել ու մեզ է փոխանցել տեղագիրը:

Յիշատակարաններից մէկում նշւում են գրչի եւ պատուիրատուների անունները: Վերջիններս, լինելով անզաւակ ամուսիններ, Աւետարանը նուիրել են կուսանաց անապատին:

> Ի խնդրոյ բարեմիտ եւ մեծահաւատ եւ իշխանազուն պարոն Միրումին, որ է որդի Սարուխան-Պէկին, թոռն մեծ Միրումանին: Զի ահա այս Միրում-պէկս, ոչ ունելով որդի մարմնաւոր, վասնորոյ, կողակից Միրում-պէկին, Խաթուն աղէն, եռափափագ սիրով եւ ջերմեռանդ սրտիւ, կատարեալ յուսով եւ լիակատար հաւատով: Ընտացաւ սուրբ աւետարանս որդի անմահ եւ յիշատակ յաւիտենական, եւ պաշար հոգոյ իւրոյ ի անդարձ ճանապարհին, որ տանի առ Քրիստոս յոյսն ամենեցուն: Ունելով ի մտի զբանն եւ զհրամանն տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ասէ. երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանի Ե-

---

[40] Գիւղը ներկայում յայտնի է Զուռնաբաղ անուամբ: Գտնւում է 1988-91ին ամբողջովին հայաթափուած, Ադրբեջանի Խանլարի շրջանում (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 4*, ԵՀ հրատ., Երեւան, 1998, էջ 173. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 303):

[41] Նման անձի իսկութիւնը պատմութիւնը չի հաստատում (*Արծագանք*, 1886, թիւ 20, Թիֆլիս, էջ 294. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 407):

[42] Բարխուդարեանց, էջ 275:

[43] Նոյն, էջ 275:

[44] Մինասեանը գրչութեան ժամանակ է նշում 1669ը, որը չի համապատասխանում մեզ յայտնի յիշատակարանում նշուած թուականին. «*Արդ՝ գրեցաւ սուրբ եւ Աստուածաշունչ աւետարանս, ի թուականիս հայոց ՌՃԻԸ. Ամին*» («Ճանապարհորդական յիշատակարան», *Արծագանք*, 1886, թիւ 20, Թիֆլիս, էջ 294. նաեւ՝ Մինասեան, էջ 77):

րուսաղէմ, եւ դարձեալ եթէ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ. սակս որոյ ըստացաւ զսուրբ աւետարանս, ի հալալ արդեանց եւ ի արդար վաստակոց իւրոց, բարեսէր կինն Խաթուն աղէն ետ ի դուռն սուրբ անապատիս, ոսկանա...տու, որ է մ....տան կու... յաղագս առիթ յիշման հոգոյ իւրոյ, եւ ծնողացն, հօր իւրոյ, խոցատեղին եւ մօրն իւրոյ Գաւհարին, եւ եղբարցն Աստուածատրին եւ Սարգսին, որք ի Քրիստոսէն հանգուցեալ: Իսկ ով ոք եթէ, իւրոց կամ օտարաց հանել կամիցի Ոսկանապատու, եւ ի դրանէ սուրբ անապատիս, կամ գրաւ դնելով, կամ վաճառելով պարտակա... ի առաջի ահեղ ատենին Քրիստոսի...[45]:

Յաջորդ յիշատակարանից յայտնի է դառնում, որ ինչ-ինչ պատճառներով ձեռագիրը յայտնուել է «անօրինաց» ձեռքին եւ կրկին վերադարձուել կուսանոցին 1684ին:

Եւ արդ ես Սարգսի որդի, Խօջա Պատիս, առի զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց. եւ ետու վախմ ի դուռն Ոսկանապատու կուսանաց անապատին, Աստուածածին սուրբ տաճարին, մի ոք իշխեսցէ հանել անտի, քանզի բնական այլ ու այնմ անապատին անուան էր գրեալ եւ տվեալ բայց յետ ժամանակաւ ի յարկածից չարին կողակսն հատեալ էին եւ մեք եւս տվաք յիշատակ թուականիս Հայոց, ՌՃԼԳ[46]:

1980ականներին՝ մինչ գիւղի հայաթափումը, Սամուէլ Կարապետեանին յաջողուել է լուսանկարել դեռեւս կիսաւեր Կուսանաց Անապատի եկեղեցին եւ չափագրել այն[47]: Կարապետեանի դիտարկմամբ՝ եկեղեցին իր յօրինուածքով ԺԷ. դարի է, որ հաստատում է Կուսանաց Անապատի՝ նոյն ԺԷ. դարի պատկանելիութիւնը:

Այլ Կուսանաց Անապատներ ըստ աւանդազրոյցների

Պատմական Գարդմանը, թերեւս, հարուստ է եղել կուսանոցներով: **Գարդմանի Գետաշէն**[48] աւանի արեւմտեան մասում գտնուող փոքր եկեղեցին, ըստ աւանդազրոյցների, եւս կուսանոց էր: Այն հաստատում է 1885ի եկեղեցական մի վաւերագիր, որտեղ այս եկեղեցին յիշատակուած է «Կուսանոց Սբ. Տիրամօր եկեղեցի» անունով[49]:

---

[45] «Ճանապարհորդական յիշատակարան», էջ 294. նաեւ՝ հայր Համազասպ Ոսկեան, *Արցախի վանքերը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953, էջ 141:

[46] «Ճանապարհորդական յիշատակարան», էջ 294:

[47] *Հիւսիսային Արցախ*, էջ 415-417:

[48] Գտնւում է Ադրբեջանի Հանրապետության Խանլարի շրջանում: Ամբողջովին հայաթափուել է 1991ին:

[49] *Հիւսիսային Արցախ*, էջ 340:

Բարխուդարեանցը եկեղեցու շինութեան թուական է համարում 1749ը՝ ներկայացնելով մուտքի խոյակի վրայ արուած արձանագրութիւնը. «ԹՎ. ՌՃՂԸ.»[50]:

«*Հաստատում են թէ Կուսանոց եղած է այս, երկար ժամանակ նստած են այստեղ կուսանք, որոց մէջ եղած է եւ մի կոյս Մէլիք-Բէկլարեանների տոհմից, որի պատճառաւ Մէլիք-Թամրազին որդին նորոգել տուած է ա-նապատս*»[51]՝ գրում է Բարխուդարեանցը, նշելով նաեւ որ եկեղեցու շուրջ դեռ պահպանւում են միքանի խցեր:

Մինչ Գետաշէնի հայաթափումը, Կուսանաց Անապատի այս եկեղեցին եւս դեռեւս կիսաւեր վիճակում էր, որի յատակագիծը եւ միքանի լուսանկարներ հրապարակել է Կարապետեանը[52]:

Ըստ աւանդազրոյցների, կուսանաց անապատ էր նաեւ **Ջրաբերդ**[53] գաւառի **Ղարաբուլաղ**[54] գիւղին կից եկեղեցին:

«*Գիւղին կից կայ մի եկեղեցի, որ գիւղացիք անուանում են «Կուսանաց անապատ»: Եկեղեցու վրայ արձանագրութիւն չկայ, բայց կիսականգուն են երկու միաբանութեան խուցերը*»[55]՝ գրում է *Նոր-դար*ի թղթակիցն այս եկեղեցու մասին:

Կարապետեանի հաղորդմամբ՝ 1980ին Կուսանաց Անապատի միաբանական խցերն հիմնովին աւերուած էին: Պահպանուած էին միայն եկեղեցու խորանին ու հիւսիսային ճակատին յարող հատուածները[56]: Ըստ Կարապետեանի այս եկեղեցու շինարուեստը եւս բնորոշ է ԺԶ.-ԺԷ. դարերին:

Պատմական Արցախի կուսանոցների շարքն այսքանով չի լրանում: Արցախի կուսանոցների մասին յայտնի են այլ աւանդազրոյցներ, որոնց արժանահաւատութիւնը երբեմն կարող է եւ կասկածի տեղիք տալ:

---

[50] Բարխուդարեանց, էջ 264:

[51] Նոյն, էջ 265. նաեւ՝ Լալայեան, «Գանձակի գաւառ», էջ 319:

[52] *Հիւսիսային Արցախ*, էջ 342-43:

[53] ԺԵ. գաւառը՝ Մռաւ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թարթառ եւ Կուրակ գետերի սահմաններում (Բարխուտարեանց, էջ 24):

[54] Այս անունով յայտնի են մի շարք բնակավայրեր: Նշուած գիւղը գտնւում է Ադրբեջանի Խանլարի շրջանում: Խորհրդային տարիներին վերանուանուել է Մարտունաշէն (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 3*, էջ 524):

[55] Գ. Աշոտեան, «Թղթակցութիւն», *Նոր-դար*, 1894, թիւ 73, էջ 3: Հմմտ.՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 385:

[56] *Հիւսիսային Արցախ*, էջ 386:

Այսպէս, աւանդազրոյցի համաձայն՝ կուսանաց անապատ է եղել նաեւ **Փառիսոս** գաւառի **Ծաղկոց Անապատը՝ Գառնակեր**[57] գիւղի հարաւային կողմում:

«*Քարաշէն, թաղակապ փոքրիկ եկեղեցի. ունի մի գաւիթ, ուր կան երկու անյայտ գերեզմաններ, որոնց Գառնակերցիք պատրում են իբրեւ սրբեր: Նրանց ասելով՝ այս տաճարն եղել է կուսանաց անապատ եւ Ծաղիկ մայրապետի անունով կոչուել է Ծաղկոցայ: Բայց եթէ արդարեւ կուսանաց մենաստան եղած լինի այս, Ծաղիկ անունից Ծաղկոցայ կոչուել չէր կարող. գուցէ Ծաղկանոցի կրճատումն է Ծաղկոցը*»[58]՝ ընդգծուած երկմտութեամբ գրում է տեղագիրը:

Որքանո՞վ են իրական այս զրոյցները՝ դժուար է ասել: Սակայն յայտնի է նաեւ, որ Հայ Եկեղեցում կուսանոցներն յաճախ գործել են նշանաւոր վանքերի հովանու ներքոյ, եւ չպէտք է բացառել, որ մոռացուած նման կուսանոցների մասին յիշողութիւնը կարող էր սերնդէսերունդ փոխանցուել սոսկ աւանդազրոյցի միջոցով:

Այսպէս՝ խոշոր վանքերի հովանու ներքոյ մեզ անյայտ մի կուսանոցի գոյութեան մասին է յուշում պատմական Ծարում[59] 1684ին Վառվառէ գրչուհու ընդօրինակած ձեռագրի յիշատակարանը.

> Գրեցաւ ի յերկիրս Ծար՝ Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի սուրբ վանս կուսանաց, ընդ հովանեաւ Դաւդէի Սուրբ Առաքելոյն եւ Սուրբ Կաթուղիկէին եւ Սուրբ Աստուածածնին եւ ամենազօր Սուրբ Նշանին Մարդաղանեաց եւ այլ սրբոց, որ անդ կան գումարեալ ձեռամբ ամենավրէպ եւ թշուառ անձին Վառվառիա միայնաւորի[60]:

Մեր ժամանակներում համացանցում եւ ճամփորդական ուղեցոյցներում իբրեւ կուսանաց անապատ է նշւում նաեւ Դաւդիվանքից ոչ-հեռու ԺԲ.-ԺԷ. դարերի Ս. Աստուածածին վանքը[61]: Աղբիւրագիտական որեւէ

---

[57] Գտնւում է Ադրբեջանի Շամխորի շրջանում (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հտր. 1*, ԵՀ հրատ., Երեւան, 1986, էջ 771. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 476):

[58] «Ճանապարհորդական յիշատակարան», *Արձագանք*, 1886, թիւ 21, էջ 308: Հմմտ.՝ Ոսկեան, էջ 161. նաեւ՝ *Հիւսիսային Արցախ*, էջ 480:

[59] Ներկայում՝ Ադրբեջանի վերահսկողութեան ներքոյ է: Ծարի հայկական սրբավայրերի մեծ մասը ադրբեջանցիները ոչնչացրել են խորհրդային տարիներին՝ խաչքարերը, տապանաքարերն օգտագործելով իբրեւ շինանիւթ (Սամուէլ Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բռնակցուած շրջաններում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1999, էջ 56):

[60] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտր. Զ.*, «Նայիրի» հրատ., Երեւան, 2012, էջ 1323:

[61] Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային*, էջ 76-81:
Կարապետեանը ուսումնասիրութիւններ է կատարել այս վանքում 1990ականներին, Քարվաճառի ազատագրումից յետոյ: Ներկայում այն կրկին ադրբեջանա-

տուեալ այս մասին՝ մեզ յայտնի չէ, թեեւ չի բացառւում, որ վանական այս համալիրի ներքոյ գործել է եւս մէկ Կուսանաց անապատ:

Եզրափակելով կարող ենք արձանագրել, որ Հայ Եկեղեցու ոչ-մեծաթիւ կուսանոցների շարքում Արցախի կուսանաց անապատները նշանակալի տեղ են զբաղեցնում: Դրանք հիմնականում ԺԷ. դարի կուսանաց անապատներ են: Մեզ յայտնի աղբիւրները, սակայն, հիմնականում արձանագրում են կուսանաց վանքերի, միանձնուհիների ու մայրապետերի անուններ՝ անպատասխան թողնելով այդ վանքերի կրօնա-եկեղեցական գործունէութեանը վերաբերող հարցեր:

Հիմնովին աւերուած կամ կիսաւեր այդ վանքերն անհերքելիօրէն Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան մաս են կազմում: Ներկայում դրանք ամբողջութեամբ Ադրբեջանի վերահսկողութէան ներքոյ են, եւ յայտնի չէ դրանց յետագայ ճակատագիրը:

THE NUNNERIES OF ARTSAKH

(Summary)

HEGHINE MKERTCHYAN (heghmk@yahoo.com)

Despite the small number of nunneries in the Armenian Church, there have been about ten nunneries in different provinces of historical Artsakh. They date back to the 17th century, when such convents faced a period of revival. Similar convents whose dates preceded and followed this are less well documented.

These nunneries of Artsakh were not only convents, but also cultural centers, where manuscripts were copied and illustrated. One such manuscript is the famous Gospel Manuscript at a nunnery in the historical province of Varanda, which dates back to the 17th century.

The nunneries of Artsakh undeniably constitute an important part of the spiritual and cultural heritage of Artsakh. However, currently they are either completely or partly destroyed and are controlled by the Azeris, which makes their future unclear.

կան իշխանութեան ներքոյ է (*Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանի,* էջ 76-81):